սաղեմի հարկադրեալ 'ի Խալիփայէն, որ և հատոյց զծախսըն, և հրաման ետ քրիստոնէից բնակիլ 'ի կողմն յոյն, և զՊատրիարգն միայն ունել ինքեանց դատաւոր »:

Իսկ եկեղեցին որ 'ի վերայ Գիւտի Խաչին, կառուցեալ 'ի Հեղինեայ, եւ կացեալ կանգուն ցեօթներորդ դարն, չնշմարի 'ի գիրս ուրեք, թէ յո՞ւմմէ և յորում ժամանակի կործանեցաւ այն չինուած հոյակապ, որ կայ մնայ մինչեւ ցայսօր ժամանակի յաւերակի իւրում: Եւ Խաչակիրք եւս զանց արարին զայնու 'ի ժամանակի իւրեանց, և չերեւի նշան ինչ երբէք, թէ չինեցին նոքա զեկեղեցի Ս. Գերեզմանին, այլ եկաց մնաց մինչ հիմնեալն 'ի Կոստանդիանոսէ գէթ պարիսպքն: Զայսոսիկ այսպէս եդեալ, դարձցուք մեք 'ի կարգ բանիս: Ի հրովարտակս Եգիպտական իշխանութեան առաջին համարի գրեալ 'ի բարբառ Արաբացւոյ, զոր առեալ է Մեսրովբ Արքեպիսկոպոս 'ի ժամանակի իշխանութեան իւրոյ, զորոյ զթարգմանութիւնն դիցուք աստանօր: « Հրամայեցաք Մեսրովբ եպիսկոպոսի լինել Արքեպիսկոպոս յԵրուսաղէմ 'ի վերայ Հայոց, զգեցուցաք նմա վերարկու պատուոյ, եւ կարգեցաք զնա վերատեսուչ 'ի վերայ ամենայն կալուածոց նոցին, և բարձաք զամենայն նեղութիւնս եպիսկոպոսին այնմիկ և վանօրէից նորա, չհամարձակել ումեք պահանջել կամ առնուլ 'ի վանաց ձէթ, մոմ և զայլ իրս, և եթէ ոք յանդգնեսցի հակառակ օրինաց մերոց՝ պատիժս կրեսցէ · արգելեալ է ծանրանալն 'ի վերայ վանաց յանիրաւի՝ սահմանել նորանոր իրս և յաւելուլ զանիրաւութիւնս և զզրկանս · ըստ կամաց իւրեանց փակեսցեն և բացցեն զդուռն վանաց երբ և յորժամ կամիցին, և մի ոք հակառակեսցի այնմ · ցորչափ կամիցին միաբանք վանաց՝ լիցի 'ի վերայ նոցա Մեսրովբ եպիսկոպոս տէր և իշխան, և յորժամ ոչ հաճեսցին ընդ այն, իջուսցեն զնա յիշխանութենէ, ըստ ընտրութեան կամաց և ըստ վաղեմի սովորութեան իւրեանց, մի ոք հակառակ կացցէ հրովարտակիս »: Գրեցաւ 'ի ١٠ Րէպիւլ էվվէլ · ٤٠٦ (1008): Հ. Մ. Զամչեան 'ի պատմելն զվարս Սիմէոնի Հայկազն կրօնաւորի, ասէ · « Ի հասանիլ նորա յԵրուսաղէմ և 'ի տարածիլ համբաւոյ սրբութեան և սքանչելի վարուց նորա, ընկալաւ զնա Արսէն եպիսկոպոս քաղաքին,